



«ԱՅԲ» ավագ դպրոց

ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒ ԵՎ ԼԵՂԱՄՏԱԾՈՐՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ 2019 թ., ապրիլ
Տևողություն՝ 1 ժամ 15 րոպե

«Այբ» ավագ դպրոց

ԳՃԱԿՈՂ

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Բոլոր պատասխանները գրել այս քննաթերթիկի մեջ՝ համապատասխան տեղերում:

Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:

Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Այս փաստաթուղթը բաղկացած է 7 տպագիր և 1 դատարկ էջերից:

Հայոց լեզու

1. Անհրաժեշտ տեղում լրացրո՛ւ բաց թողած տառերը, երկինջյունները:

Մի թագավոր իր զորքով ճանապարհ էր գնում: Նա երկու սուրբ հայրերի տեսավ՝ գարշելի հագուստով: Թագավորը կանգ առավ: Նա իջավ նժույգից և խոսարհվելով համբուրեց նրանց ձեռքերը: Չորավարներն սկսեցին տրտնջալ, թե թագավորն իր մեծամեծ իշխաններին պատվի չի արժանացնում, բայց չնչին մարդկանց մեծարում է:

Թագավորը, իմանալով այդ մասին, հրամայեց շուտափույթ չորս սնդուկ սարքել. երկուսը՝ արտաքուստ գեղեցիկ ու քանդակագարդ, լի աղբով ու ավազով, իսկ մյուս երկուսը՝ արտաքուստ տհաճ, կպրոտ, մեջը լի ոսկով ու մարգարտով: Եվ կանչելով բամբասող իշխաններին՝ բարեշնորհ թագավորն ասաց.

— Գնահատե՛ք և ընտրե՛ք չորս կնքած արկղերից որևէ մեկը:

Նրանք անմիջապես ընտրեցին գեղեցիկները և երբ բացելով տեսան , որ դրանք լցված են աղբով ու ավազով, զղջացին:

Թագավորն ասաց.

— Այդպես նայում եք երեսին և պայծառ հագուստին՝ այն մարդու, որ ներքուստ լի է աղտեղությամբ: Իսկ այն սուրբ հայրերը, որոնց հանդիպեցինք, արտաքուստ էին կեղտոտ, իսկ ներքուստ՝ լի հոգու շնորհով:

5 միավոր

2. Տեքստում կան կետադրական բացթողումներ. լրացրո՛ւ դրանք:

2 միավոր

3. Գրի՛ր հետևյալ բառերի՝ հոմանիշները և հականիշները:

գեղեցիկ – չքնաղ, տգեղ
գարշելի – նողկալի, հաճելի
մեծարել-, գովաբանել, ստորացնել
աղտեղություն- կեղտոտություն, մաքրություն

2 միավոր

4. Տեքստից դ՛րս գրիր տրված կաղապարներին համապատասխան երկուական բառ.

արմատ+ վերջավորություն-շնորհով, երեսին,
արմատ+վերջածանց –կեղտոտ, թագավոր
արմատ+վերջածանց +վերջավորություն–հագուստին, թագավորը
արմատ+ հոդակապ +արմատ –բարեշնորհ, մեծամեծ

2 միավոր

5. Տեքստում գտի՛ր այնպիսի բարդ բառ, որն ունենա ա/մակբայով, բ/ ածականով արտահայտված արմատ: Դո՛ւրս գրիր այդ բառերը և արմատները ընդգծի՛ր:

շուտափույթ- շուտ/ մակբայ/
մեծամեծ-մեծ/ածական/

1 միավոր

6. Տեքստից դ՛րս գրիր 1 պատճառական բայ և կազմի՛ր այդ բայի հրամայական եղանակը, սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևը (բայերը գործածի՛ր դրական և ժխտական խոնարհումով):

պատճառական բայ - արժանացնել
հրամայական եղանակ - արժանացրո՛ւ, արժանացրե՛ք, մի՛ արժանացրու, մի՛ արժանացրեք
անցյալ կատարյալ – արժանացրեց, չարժանացրեց, արժանացրին, չարժանացրին

1,5 միավոր

7. Դո՛ւրս գրիր տեքստում ընդգծված բառերը և որոշի՛ր դրանց հոլովը, հոլովումը և նախադասության մեջ շարահյուսական պաշտոնը:

ծեռքերը - ի հոլովում, հայցական հոլով, ուղիղ խնդիր
մարդկանց - ու հոլովում, հայցական հոլով, ուղիղ խնդիր
ավագով - ի հոլովում, գործիական հոլով, միջոցի խնդիր
աղտեղությամբ - ա հոլովում, գործիական հոլով, միջոցի խնդիր
հոգու - ու հոլովում, սեռական հոլով, հատկացուցիչ

3 միավոր

8. Տեքստից դր՛րս գրիր

ա. պարզ համառոտ մեկ նախադասություն և ընդարձակի՛ր:

Թագավորը կանգ առավ: Թագավորն իսկույն կանգ առավ:

բ. պարզ ընդարձակ մեկ նախադասություն և դարձրու՛ բարդ:

Մի թագավոր իր զորքով ճանապարհ էր գնում:

Մի թագավոր, որ աշխարհին հայտնի էր իր բարեպաշտությամբ և իմաստությամբ, զորքով ճամփա էր գնում:

1,5 միավոր

9. Գտի՛ր և ուղղի՛ր սխալները այն նախադասություններում, որտեղ դրանք առկա են (բառագործածության, խնդրառության, համաձայնության):

ա Ես ուզում եմ, որ ինձ՝ որպես թագավորի, գնահատեն ու սիրեն ոչ թե արտաքին, այլ ներքին հատկանիշների համար:

բ Թագավորը ծրագրել էր պատկերավոր բացատրություն տալ:

գ Պետք է պայքարել այն ամենի դեմ, ինչը խոչընդոտում է ստեղծարարությունն ու առաջընթացը:

դ Արքան խրախուսում էր մարդկայինն ու վսեմը:

2 միավոր

Լեզվամտածողություն

1. Հակիրճ շարադրի՛ր մտքերդ այս առակի մասին:

3 միավոր

2. Ինչպե՞ս կվարվեիր դու թագավորի փոխարեն:

3 միավոր

3. Բնութագրի՛ր թագավորին:

2 միավոր

4. Գրի՛ր իշխաններից մեկի խոսքը՝ ի պատասխան թագավորի արարքի:

2 միավոր

5. Գրի՛ր *մարդ* բառով երկու դարձվածք և բացատրի՛ր:

2 միավոր

ԴԱՏԱՐԿ ԷԶ